ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Երևանտրանս» ՓԲԸ-ի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևանտրանս» ՓԲԸ-ից որպես նվիրատվություն ընդունել սեփականության իրավունքով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03032021-01-0279 վկայական/ ընկերությանը պատկանող Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի հ.16 հասցեում գտնվող 4.0248հա մակերեսով հողամասը և շենք շինությունները՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման կատարումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող ավագանու որոշման նախագծով նախատեսվում է որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի հ.16 հասցեում «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03032021-01-0279 վկայական/ 4.0248հա մակերեսով հողամասը և շենք շինությունները՝ համաձայն հավելվածի:

Քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Հետևաբար անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունել «Երևանտրանս» ՓԲԸ-ի կողմից Երևան համայնքին նվիրաբերվող գույքը:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույք ընդունելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022թ. --------- ---ի
N---Ա որոշման

ՑԱՆԿ
Երևան համայնքին նվիրաբերվող գույք

Կադաստրային ծածկագիր	տեսակ	մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
01-007-0204-0046-001	Արտադրական Ա մասնաշենք	1742.4քմ	սեփականություն
01-007-0204-0046-002	Արտադրական Բ մասնաշենք	1888.6քմ	սեփականություն
01-007-0204-0046-003	Վարչական շենք	1181.4քմ	սեփականություն
01-007-0204-0046-005	Արհեստանոց	432.9քմ	սեփականություն
01-007-0204-0046-006	Պահեստ	4131.1քմ	սեփականություն
01-007-0204-0046-007	Արհեստանոց	21քմ	սեփականություն
01-007-0204-0046-008	Ավտոտնակներ	93.6քմ	սեփականություն
01-007-0204-0046-009	Պահեստ	34.5քմ	սեփականություն
01-007-0204-0046-010	Պահակատուն	36.25քմ	սեփականություն